ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Գուրգեն Քոթանջյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

Մարմնավաճառությունը տնտեսական, սոցիալ-հոգեբանական և մի շարք այլ գործոններով պայմանավորված բազմաշերտ երևույթ է: Ուստի մարմնավաճառության դեմ արդյունավետ պայքարի իրականացումը ևս ենթադրում է համալիր միջոցառումների համակարգային մշակում և իրականացում:

Հարկ է նշել, որ մարմնավաճառության կանխարգելման հարցում միասնական մոտեցում առկա չէ: Կան երկրներ, որտեղ մարմնավավաճառությունը պաշտոնապես թույլատրված է (Նիդերլանդներ, Գերմանիա)[1], մինչդեռ մյուսներում մարմնավաճառությամբ զբաղվելու համար սահմանված է քրեական կամ վարչական պատասխանատվություն: Օրինակ՝ քրեական պատասխանատվություն է սահմանված Ալբանիայի, Իսլանդիայի, Թուրքմենստանի և այլ երկրների օրենսդրությամբ[2]: Այնուհանդերձ, պետությունների մեծ մասում, այդ թվում և ՀՀ-ում, մարմնավաճառությամբ զբաղվելու համար սահմանված են վարչական ներգործության միջոցներ:

Մարմնավաճառության համար վարչական պատասխանատվության սահմանման առումով մոտեցումները ևս միանշանակ չեն: Այսպես, մի խումբ հեղինակներ առաջարկում են վերացնել մարմնավաճառության համար նախատեսված վարչական պատասխանատվությունը[3]՝ իրենց տեսակետը հիմնավորելով այն բանով, որ մարմնավաճառության օրինականացնումը կհեշտացնի մարմնավաճառների նկատմամբ բժշկական հսկողության իրականացումը, կպաշտպանի մարմնավաճառներին, իսկ պետությանը կբերի որոշակի ֆինանսական օգուտներ[4]: Այս տեսակետի հետ դժվար է համաձայնվել. նախ՝ մարմնավաճառության օրինականացումը չի երաշխավորում ապօրինի մարմնավաճառության վերացումը: Դրա մասին վկայում է այն փաստը, որ այն պետություններում, որտեղ մարմնավաճառությունը պաշտոնապես թույլատրված է, այսինքն՝ կան գրանցված մարմնավաճառներ, ովքեր իրավունք ունեն օրվա որոշակի ժամերի և սահմանված վայրերում առաջարկել սեքսուալ բնույթի ծառայություններ, գոյություն ունի նաև չգրանցված մարմնավաճառություն[5]**:** Երկրորդ՝ մարմնավաճառության պաշտոնապես գրանցումը կարող է հանգեցնել նրանց ծառայություններից օգտվողների թվի աճի: Եվ ամենակարևորը՝ այս քայլը միանշանակ չի ընդունվի նաև հասարակության կողմից:

[1] Տե՛ս Смирнов Ю. П. Уголовная ответственность за сексуальную експлуатацию других лиц в форме занятия ими проституцией. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2010, էջ 90:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 89-90:
[3] Տե՛ս Габиани А. А. О правовых мерах по ограничению проституции и ее социально опасных последствий // Советское государство и право. 1991, №2, էջ 72
[4] Տե՛ս Криминология. Учебник для вузов / Под ред. С. М. Иншакова. М., 2000, էջ 333:
[5] Տե՛ս Маныч Е. Г. Проституция: криминологические и уголовно-правовые аспекты противодействия. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук . М., 2006, էջեր 150-152:

2012 թ.-ին Երևանում մեր կողմից իրականացված հարցման արդյունքները վկայում են, որ բնակչության միայն 40%-ն է արտահայտվել մարմնավաճառության օրինականացման օգտին: Ինչ վերաբերում է սեռավարակների տարածման կանխմանը, ապա 2012 թ. բժիշկների շրջանում մեր կողմից իրականացված փորձագիտական հարցմանը մասնակցածների միայն 12%-ն է նշել, որ մարմանավաճառության օրինականացումը ամբողջությամբ կլուծի սեռավարակների տարածման խնդիրը:

Կարծում ենք՝ հնարավոր է գտնել այս հարցի լուծման ավելի արդյունավետ միջոց: Այսպես, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 45-ի համաձայն՝ «բժշկական զննումից այն անձանց խուսափելը, որոնց վերաբերյալ բավարար տվյալներ կան այն մասին, որ նրանք տառապում են վեներական հիվանդությամբ, կամ բուժումից այն անձանց խուսափելը, որոնք շփման մեջ են գտնվել վեներական հիվանդությամբ տառապողների հետ և ունեն պրոֆիլակտիկ բուժման կարիք և շարունակում են խուսափել առողջապահության հիմնարկի կողմից արված նախազգուշացումից հետո՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»: Գտնում ենք, որ վեներական հիվանդությամբ տառապող մարմնավաճառների հանդեպ պետք է կիրառել այլ կարգ: Քանի որ նրանք ամեն օր դուրս են գալիս «աշխատանքի» և պոտենցիալ վտանգի աղբյուր են, ուստի նրանց նկատմամբ տուգանքի կիրառումը արդյունավետ լինել չի կարող: Իսկ մեր հարցումին մասնակցած բժիշկների մեծ մասը նշում է, որ նրանք հաճախ կիսատ են թողնում բուժումը: Այս առումով կարծում ենք՝ վեներական հիվանդությամբ տառապող մարմնավաճառների նկատմամբ պետք է կիրառել հարկադիր բուժում: Ուստի առաջարկում ենք վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 179[1]–ում ներառել այսպիսի նորմ. «Հոդված 179[1]–ով պատասխանատվության ենթարկված անձինք ենթակա են պարտադիր բժշկական (մաշկաբանական) ստուգման: Նրանց մոտ վեներական հիվանդություն հայտնաբերելու դեպքում վերջիններս ենթակա են հարկադիր բուժման»:

Մարմնավաճառության օրինականացմանը դեմ են արտահայտվել նաև 2012թ.-ին մեր կողմից իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում փորձագիտական հարցման մասնակցած անձանց 55%-ը: Վերջիններս ավելի կարևորում են մարմնավաճառությունը ծնող երևույթների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը:

Այս մոտեցմանը կողմ են արտահայտվել նաև շատ գիտնականների: Օրինակ՝ Դ. Լևչուկը, Օ. Պոտապովսկայան առաջարկում են պայքարել մարմնավաճառությունը ծնող հանգամանքների դեմ՝ առանձնացնելով մի շարք բարոյական անբարենպաստ գործոններ[6]: Մասնավորապես, նրանք առաջարկում են մարմնավաճառությանը հակազդման գործում հիմնական ջանքերը ուղղել հասարակության բարոյական վերածննդին, հասարակության արժեքային համակարգի վերականգնմանը, իսկ դրանց կարելի է հասնել մշակութային և դաստիարակչական աշխատանքների միջոցով[7]: Կանխարգելման միջոցառումների ակտիվ մասնակիցներ պետք է լինեն նախևառաջ ընտանիքը և ուսումնական հաստատությունները: Գիտնականների մի մասն էլ առաջարկում են դպրոցական

[6]Տե՛ս Левчук Д. Г., Потаповская О. М. Духовно- нравственное воспитание молодежи России. Комплексное решение проблемы. М., 2003, էջ 3:

[7] Տե՛ս Голина В. В. Криминологическая профилактика, предотвращение и пресечение преступлений. Киев, 1989, էջեր 13-21:

ծրագրում ներառել սեռական դաստիարակության առարկա, ծնողների հետ իրականացնել բացատրական աշխատանքներ, նրանց տրամադրել երեխաների սեռական զարգացման վերաբերյալ անհրաժեշտ գրականություն և կատարել դաստիարակչական բնույթի այլ միջոցառումներ[8]:

Ինչ խոսք, վաղ կանխարգելումը ունի մեծ նշանակություն, և դրա կարևորությունը դժվար է գերագնահատել: Ինչպես նշվել է գրականության մեջ, հանցավորության դեմ պայքարում ամենակարևորը վաղ կանխարգելումն է. անհրաժեշտ է անձի ձևավորման համար ստեղծել պատշաճ պայմաններ, որպեսզի հակահասարակական վարքագիծը չվերաճի հանցագործության[9]:

Պետք է փաստել, որ վերջին շրջանում ՀՀ-ում կատարվել են երեխաների սեռական դաստիարակությանն ուղղված որոշակի քայլեր: Մասնավորապես, դպրոցներում դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որը աշակերտներին որոշակի գիտելիքներ է մատուցում սեռական դաստիարակության վերաբերյալ: Սակայն դրանք առավելապես վերաբերում են սեռական հիգիենայի և սեռավարակներից պաշտպանվելու հարցերին: Չժխտելով դրանց կարևորությունը՝ կարծում ենք, որ սեռական դաստիարակության առարկան պետք է ներառի նաև դրույթներ, որոնք ուղղված են ընտանեկան բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը: Բացի դրանից՝ ցանկալի է, որ այդ առարկան դասավանդի բժիշկը կամ հոգեբանը, այնինչ մեր դպրոցներում այս առարկան հիմնականում այլ մասնագետներ են դասավանդում:

Մասնագետների կողմից առաջարկվող հաջորդ միջոցը, որը ուղղված է մարմնավաճառության կանխմանը, զանգվածային լրատվամիջոցների և համացանցի կանոնակարգումն է[10]: Հեռուստատեսությամբ բռնության և դաժանության քարոզը կանխելու համար մասնագետները առաջարկում են ստեղծել էթիկայի հանձնաժողովներ, որոնք կհետևեն հեռուստաընկերությունների կողմից օրենսդրության կատարման ընթացքին[11]: Հեռուստատեսության բացասական ներգործությունը երեխաների հոգեբանության վրա բազմիցս նշվել է քրեագետների կողմից[12]: Հարկ է արձանագրել, որ ներկայումս ՀՀ-ում հիշատակված խնդիրը օրենսդրորեն կարգավորված է: Այսպես, հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքի հոդված 24-ի համաձայն՝ արգելվում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել բռնության, դաժանության, պոռնկագրության տարածման նպատակով: Սակայն անհրաժեշտ է նշել, որ հեռուստաալիքները ոչ միշտ են կատարում հիշատակված նորմի պահանջները: Մասնավորապես, հեռուստատեսությամբ ցուցադրվող հաղորդումներում հաճախ կարելի է հանդիպել բռնության և դաժան տեսարանների: Կարծում ենք՝ այս հարցում լիազոր մարմինը պետք է ավելի հետևողական լինի: Հեռուստատեսությամբ պոռնկագրական բնույթի հաղորդումներ թեև չեն ցուցադր-

---

[8] Տե՛ս Федик Е. Н. Ответственность за действия, связанных с проституцией: Уголовно-правовые и криминологические аспекты. Екатеренбург, 2003, էջեր 142-158:

[9] Տե՛ս Антонян Ю. М., Бородин С. В. Преступное поведение и психологические аномалии /Под. ред В. Н. Кудрявцева. М., 1998, էջ 187:

[10] Տե՛ս Пристанская О. В. Правовая зашита несовершеннолетних в сфере массового сексуального просвещения // Журнал российского права. 2000. №1, էջ 42:

[11] Տե՛ս Федик Е.Н. նշվ. աշխ., էջեր 156-157:

[12] Տե՛ս Лыков В. Падение нравов как фактор преступности // Профессионал. 2002. №1(4), էջ 4, Дроздов А. Ю. Агрессивное телевидение // Социологические исследования. 2001, №8, էջեր 62-67, Криминология . Под ред. В. Н. Кудрявцева, В. Е. Эминова. М., 1997, էջ 75:

վում, սակայն հաճախադեպ են բաց տեսարաններով ցուցադրությունները: Այս հարցում կանոր է ծնողների դերը, ովքեր չպետք է երեխաներին թույլ տան դիտել նման հաղորդումները:

Խոսելով լրատվամիջոցների մասին՝ չենք կարող չանդրադառնալ համացանցին, որտեղ վիճակը ամբողջովին անվերահսկելի է: Համացանցը ողողված է պոռնոգրաֆիկ կայքերով, ուր տեղադրված են նաև մարմնավաճառների գովազդներ: Այդ կայքերը հասանելի են յուրաքանչյուրին, և երեխաները ազատորեն կարող են օգտվել դրանցից, ինչը վնասակար ազդեցություն է թողնում նրանց հոգեբանության վրա: Այս առումով լուրջ անելիքներ ունեն իրավապահ մարմինները: Ոստիկանությունում գործում է համակարգչային հանցագործությունների դեմ ստորաբաժանում, որը համապատասխան օրենսդրական հիմքի առկայության պարագայում պետք է զբաղվի հիշատակված կայքերի արգելափակմամբ ՀՀ տարածքում: Նկատի ունենալով նշված կայքերի պոռնոգրաֆիկ բնույթը՝ տեղեկատվության տարածման ազատության սահմանափակման խնդիր ծագել չի կարող:

Վաղ կանխարգելմանը զուգընթաց՝ չափազանց կարևոր նշանակություն ունի նաև անհատական կանխարգելման իրականացումը[13]: Այս եղանակի էությունը անհատական ներգործության իրականացումն է այն անձանց նկատմամբ, որոնց վարքագիծը թույլ է տալիս կանխորոշելու նրանց կողմից հակահիրավական վարքագծի դրսևորումը: Պետք է համաձայնել այն հեղինակների հետ, ովքեր համարում են, որ մարմնավաճառության պարագայում անհատական ներգործությունը առաջին հերթին պետք է ուղղված լինի մարմնավաճառության հետ հարաբերակցվող հանցագործությունների զոհերին, քանի որ նրանց վարքագիծը աչքի է ընկնում բարձր վիկտիմայնությամբ: Պայքարի այս եղանակը կարելի է անվանել կանխարգելում զոհերի շրջանում կամ վիկտիմոլոգիական կանխարգելում[14]:

Կրիմինոլոգիական գրականության մեջ որպես անհատական կանխարգելման հասցեատերեր հատուկ ընդգծվում են երեխաները և պատանիները, որոնց հետ իրավապահ մարմինները պետք է աշխատանքներ տանեն միջնորդավորված եղանակով (ծնողների, որդեգրողների, հարազատների, ուսուցիչների միջոցով)[15]: Անհատական կանխարգելման հասցեատերերի շրջանակը ցանկանում ենք լրացնել՝ դրանում ընդգրկելով նախկին մարմնավաճառներին, մուրացկաններին, մանկատան շրջանավարտներին, քանի որ նշված անձինք խոցելի խմբեր են մարմնավաճառության ներգրավման առումով:

Ինչպես նկատեցինք, բերված միջոցառումների զգալի մասում մարմնավաճառության դեմ պայքարում շեշտը դրվում է քարոզչական և դաստիարակչական աշխատանքների վրա: Այնուհանդերձ, այս միջոցառումները շատ ընդհանուր են, ուղղված չեն կոնկրետ հասցեատերերի (խմբերի), իսկ դրանցից շատերը դժվարիրագործելի են, քանի որ պահանջում են մեծ ֆինանսական միջոցներ և ժամանակ:

Կարծում ենք՝ մարմնավաճառության կանխարգելման եղանակների համակարգը

---

[13] Տե՛ս Криминология , էջ 280:

[14] Տե՛ս Кадников Н. Г. Квалификация преступлений и вопросы судебного толкования. М., Юриспруденция. 2009, էջ 211:

[15] Տե՛ս Смирнов Ю. П. Уголовная ответственность за сексуальную експлуатацию других лиц в форме занятия ими проституцией. Дисс. канд. юрид. наук. М., 2010, էջ 163:

պետք է բավարարի հետևյալ պահանջները. այն պետք է կազմված լինի վաղ կանխարգելման, հատուկ կանխարգելման, անհատական կանխարգելման միջոցառումներից, որոնք պետք է հնարավորինս կոնկրետացված և թիրախային լինեն, կարևոր է, որ այդ միջացառումները իրագործման առումով բարդ չլինեն:

Մեր կարծիքով, մարմնավաճառության կանխարգելման համար վարչական պատասխանատվության (ինչը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ) հետ միասին անհրաժեշտ է սեռական դաստիարակության պատշաճ համակարգի ընդգրկումը դպրոցական ծրագրում, պոռնոգրաֆիկ կայքերի արգելափակումը, պետության կողմից համապատասխան քարոզչության իրականացումը: Որպես վաղ կանխարգելում կարևոր եղանակ է, որ անչափահասները հնարավորինս մեկուսացված լինեն մարմնավաճառներից: Բնակչության շրջանում մեր կատարած հարցումները վկայում են, որ մեր քաղաքացիները բավական հաճախ են իրենց շրջապատում տեսնում մարմնավաճառների: Այսպես, «ի՞նչ հաճախականությամբ եք ձեր շրջապատում տեսնում մարմնավաճառների» հարցին հարցվածների 57%-ը պատասխանել է՝ ամեն օր: Մարմնավաճառների տարածվածությունը և տեսանելի լինելը վտանգավոր են երեխաների համար՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական առանձնահատկությունները: Այդ պատճառով անհրաժեշտ է որոշակի միջոցներ ձեռնարկել, որպեսզի սահմանափակվի մարմնավաճառների գործունեությունը այն վայրերում, որտեղ երեխաներ շատ են լինում: Պետք է նշել, որ նմանօրինակ կարգ սահմանված է եվրոպական որոշ երկրներում, որտեղ մարմնավաճառությունը պաշտոնապես թույլատրված է, բայց գոյություն ունի որոշակի վայրերում կամ օրվա որոշակի ժամերին մարմնավաճառությամբ զբաղվելու արգելք [16]: ՀՀ-ում այդ խնդիրը լուծելուն մեր կարծիքով կօգնի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում որոշակի վայրերում մարմնավաճառությամբ զբաղվելու (ծառայություններ առաջարկելու) համար ավելի խիստ պատասխանատվության նորմի սահմանումը: Ներկայիս օրենսգրքի հոդված 179[1] համաձայն՝ պոռկությամբ զբաղվելը առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի քսանպատիկի չափով: Առաջարկում ենք հոդվածում ավելացնել դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ. «Պոռնկությամբ զբաղվող անձանց կողմից իրենց ծառայությունների առաջարկելը ուսումնական կամ դաստիարակչական հաստատություններում կամ դրանց շրջակայքում (մինչև 500մ հեռավորության վրա) առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»: Կարծում ենք՝ արդարացված կլինի նշված դրույթը ներառել նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 262-ում ՝ որպես ծանրացնող հանգամանք:

Մանկատան շրջանավարտները խոցելի խումբ են մարմնավաճառության ներգրավման առումով: Մամուլում հրապարակումներ եղան, որ նրանցից ոմանք ենթարկվել են սեռական թրաֆիքինգի[17]: Այս փաստը բացատրվում է նրանով, որ նրանք, դուրս գալով մանկատնից, գտնվում են սոցիալական վատ վիճակում, քանի որ դժվարանում են աշխատանք գտնել և չունենալով հարազատներ՝ զրկված են լինում խնամքից և հսկողությունից՝ դրանով իսկ խոցելի դառնալով հանցանք կատարող անձանց համար: Մեր կարծիքով, անհրաժեշտ է այնպիսի միջոցառումներ կիրառել, որոնք կհեշտացնեն մանկա-

[16] Տե՛ս Маныч Е. Г. նշվ. աշխ., էջեր 147-148:
[17] Տե՛ս www.Hetq.am Միեր Արշակյան / Մանկատան աղջիկները Դուբայում, 17 հոկտեմբերի, 2005:

տան շրջանավարտների համար աշխատանք գտնելու խնդիրը: Գործատուի համար պետք է ձեռնտու լինի նրանց աշխատանքի վերցնել: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով առաջարկում ենք նվազեցնել մանկատան շրջանավարտների եկամտային հարկի դրույքաչափերը: Այսպես, եկամտահարկի մասին օրենքի հոդված 10-ի համաձայն՝ մինչև 120 հազար դրամ եկամտից հարկվում է եկամտի 24.4 տոկոսը, իսկ 120 հազար դրամից ավելիի դեպքում՝ 29.280 դրամին գումարած 120 հազար դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը: Մենք առաջարկում ենք եկամտահարկի մասին օրենքի հոդված 10-ում նախատեսել առանձին կետ՝ հետևյալ բովանդակությամբ. <<Մանկատան շրջանավարտներից գանձվող եկամտային հարկի դրույքաչափերը հաշվարկվում են սույն հոդվածի առաջին մասի առաջին կետով սահմանված դրույքաչափի կեսով>>: Գտնում ենք, որ այս դրույթի ներմուծումը գործատուներին կշահագրգռի աշխատանք տրամադրել մանկատան շրջանավարտներին: Այս նորմի կիրառումը մեծ ազդեցություն չի թողնի բյուջեի վրա, քանի որ մանկատան շրջանավարտների թիվը մեծ չէ: Փոխարենը այս նորմը էականորեն կարող է ազդել մանկատան շրջանավարտների զբաղվածության, ուստիև սոցիալական վիճակի բարելավման վրա՝ այդպիսով նրանց զերծ պահելով մարմնավաճառությամբ կամ այլ հակահիրավական գործունեությամբ զբաղվելուց կամ թրաֆիքինգի զոհ դառնալուց:

Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել մարմնավաճառների, ծնողազուրկ և անապահով ընտանիքների անչափահաս երեխաների նկատմամբ: Այստեղ իրավապահ մարմինները մեծ աշխատանք ունեն կատարելու: Ոստիկանությունում որևէ պաշտոնական տվյալ չկա մարմնավաճառությամբ զբաղվող անձանց ընտանեկան դրության վերաբերյալ: Միայն կան տարեկան կտրվածքով վարչական պատասխանատվության ենթարկված մարմնավաճառների վերաբերյալ որոշ տվյալներ, այն է՝ նրանց թիվը, սեռը, անչափահաս մարմնավաճառների առկայությունը: Մեր կարծիքով, յուրաքանչյուր մարմնավաճառի համար, որ հայտնվում է իրավապահների ուշադրության կենտրոնում, հարկավոր է կազմել նրա անհատական տվյալների քարտ: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել նրանց՝ անչափահաս երեխաներ ունենալու հանգամանքին՝ անհրաժեշտության դեպքում նրանց տեղափոխել անչափահասների խնամքով զբաղվող հաստատություն:

Մարմնավաճառության կանխարգելման միջոցառումներից են նաև մարմնավաճառների հետ տարվող բացատրական աշխատանքները, որոնց արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն կոնկրետ մարմնավաճառի մասին տեղեկացված լինելու պարագայում, ինչն էլ հնարավոր կդարձնի հասկանալ մարմնավաճառությամբ զբաղվելու դրդապատճառները: Ընդ որում, այդ բացատրական աշխատանքները պետք է իրականացնել ոչ թե ձևականորեն, այլ հոգեբանի ներգրավմամբ, որը կօգնի վեր հանել մարմանավաճառությամբ զբաղվող անձի վարքագծի խորքային, հաճախ ենթագիտակցականի մակարդակում գտնվող պատճառները և նշել դրանց հաղթահարման ուղիները:

Մարմնավաճառության հետ կապված մտահոգիչ երևույթներից է մարմնավաճառների և հաճախորդների, ինչպես նաև մարմնավաճառների՝ միմյանց նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը: Մասնավորապես, մեր կողմից հարցված մարմնավաճառների 57%-ը նշել է, որ հաճախորդները իրենց հանդեպ բռնություն են կիրառել, մարմնավաճառների 14%-ն էլ նշել է, որ բռնության են ենթարկվել այլ մարմնավաճառների կողմից: Այդ մասին հրապարակումներ են եղել նաև մամուլում: Օրինակ, Երևանյան լճի մոտ

վիճաբանության են բռնվել տվյալ տարածքում գործունեություն ծավալող երեք մարմնավաճառներ, որոնցից մեկը դանակի հարվածներ է հասցրել գործընկերուհուն[18]: Նշված հարցերը որոշ չափով կարգավորելու համար կարելի է տեսախցիկներ տեղադրել փողոցային մարմնավաճառների հավաքվելու վայրերում: Դա ավելի զգոն կդարձնի և՛ նրանց, և՛ հաճախորդներին, ինչպես նաև կկանխի մարմնավաճառների կողմից անչափահասներին ծառայություններ մատուցելու դեպքերը:

Կարծում ենք, որ ներկայացված միջոցառումները, ՀՀ օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունները կարող են նպաստել մարմնավաճառության կանխմանը, այն ծնող երևույթների չեզոքացմանը, մարմնավաճառություն երևույթի ծավալների կրճատմանը:

MEASURES TO PREVENT PROSTITUTION

Gurgen Kotanjyan
PHD student, Chair of Criminal Law, YSU

Prostitution is a many-sided phenomenon which includes includes numerous economic and socio -psychological factors. In order to combat prostitution effectively, it is necessary to develop a complex system of preventive measures. Prostitution is legalized in several countries while in the others administrative or even criminal responsibility is provided. In the Republic of Armenia though administrative responsibility is provided for the prostitution, however this measure of state coercion is ineffective.

Having the aim of increasing the efficiency of the prostitution prevention, we propose to reduce income tax rates for persons graduated from orphanages, to create individual information cards for prostitutes, conduct explanatory work with prostitutes with the engagement of psychologist, to apply compulsory treatment to prostitutes suffering from venereal diseases, to block pornographic sites in Armenia , etc.

МЕРЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРОСТИТУЦИИ

Гурген Котанджян
Соискатель кафедры Уголовного права, ЕГУ

Для проведения эффективной борьбы с проституцией необходима разработка комплексой системы мер предупреждения, так как проституция представляет собой многогранное явление, которое включает в себя многочисленные экономические и социально-психологические факторы. В некоторых странах проституция

[18] Տե՛ս www.lurer.com. Մարմնավաճառների միջև դանակահարություն է տեղի ունեցել, 2012/07/10:

легализована, в то время как в других предусмотрена административная или даже уголовная ответственность за занятие проституцией. В Республике Армения предусмотрена административная ответственность за занятие проституцией, однако эта мера государственного принуждения не эффективна для предупреждения проституции.

Для предупреждения проституции и связанных с ней других негативних явлений мы предлагаем снизить ставки подоходного налога для выпускников детских домов, составить карты индивидуальных данных проституток, с проститутками вести разъяснительную работу с участием психолога, к проституткам, страдающим венерическими заболеваниями, применять принудительное лечение, блокировать порнографические сайты в РА и т.д.

Բանալի բառեր – Մարմնավաճառություն, մարմնավաճառության կանխարգելում, քրեական պատասխանատվություն, վարչական պատասխանատվություն, սեռական դաստիարակություն:
Key words: Prostitution, prevention of prostitution, criminal responsibility, administrative responsibility, sex education.
Ключевые слова: Проституция, профилактика проституции, уголовная ответственность, административная ответственность, половое воспитание.